

առանձապէն բոլոր ազգային թէրթերու ամենէն հետաքրքրական և հայ գիտութեան վերաբերեալ յօդուածներու քաղուածոյն օգտակար ընկեր հայ բանասիրաց ։ Սակայն յակամայու տեղուու սղոթեան պատճառու կը ստիպուիմք հանդէսներու ցանկէն ինչ ինչ յօդուածներ (գորս շնոր մոռնար յարգելու) դուրս թողուու, որպէս զի սոյն ցանկին մէջ փոխանակէն նաեւ լրագրաց առաջնակարգ յօդուածներու ցանկն ։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

— 2 —

ՊԱՏԱՍԽԱՆՔ

ԲԱԶՄԱՎԻՊԻ ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻՆ

~~~~~

(Պատասխան Անգուստամբերի ամսարուոյ երրորդ հարցման):

**Հարցում.** — Առաջիմ անգամ ե՞րբ և ո՞ր սկզած է նամակաղործից գործածութիւմը (timbres-poste). բարձր զի՞մ ունեցող նամակաղորչմերը որո՞նք են, և որո՞նց հաւաքածումնը աւելի նշանաւոր են։

**Պատ.** — Պատասխանն կրնայ շատ երկար զրուի, բայց Բարմական էջերուն կարեւորութիւնն զմեզ կը ստիպէ ասկաւախօս լինել. ուստի պիտի բաւականանանց համառակար խօսել։

Ա. Առաջին անգամ՝ 1840ին Անգլիոյ մէջ գործածուած է նամակաղորչմն, որուն հետեւած են, Միացեալ նահանգաց 7 նահանգներն (Նիւ-Յորք, Ուէն-Լուփ, Պալթիմոր, Բրուքլինս, և այլն, և այլն), 1844ին, իսկ 1843ին Հելուետիոյ նահանգներն և Պրազի, 1847ին Հելուետիոյ նահանգաց բոլորն. 1849ին կը ընդհանրապէս Պալթիմ, Պելճիքա, Ֆրանսաս եւս ընդունելու։

Դիմուող մը պիտի տեսնէ թէ բաղաքակըրթութեամբ առաւել զարգացած երկիրներ աւելի շուրջ ընդդրկած են նամակաղորչմի գործա-

գութիւնն, քան նուազ բաղաքակիրթներն, որոնց աւելի ուշ ընդդրկած են։

Բ. Բարձր զի՞ն ունեցող նամակաղորչմները չեն պակսիր ամէն երկիրներու նամակաղորչմից մէջ. բայց ամենէն սուզ են 1847ի Մօրիս կղ.ի 4 բէնի, որ կ'արժէ 7000 մարգ. և 2 բէնին, որ կ'արժէ 5000 մարգ. 1858ին Բումանիոյ 81 բարան, որ կ'արժէ 2500 մարգ. 1875/76ի Աֆղանիստանի և առոքին, որ կ'արժէ 1000 մարգ. և ուրիշներ 900, 600, 400 մարգ արժողութեամբ: իսկ առանձարակ բարձր արժողութեամբ նամակաղորչմներն են Աֆղանիստանի, Պրազիլիոյ (Հիներն), Պրանալիբի, Պրիմայի, Պուէնոս-այ-րոսի, Ալյասի (1857-64), Մօրիս կղզ. Ռումանիոյ (Մօլտա-Վալաքիա), Իլուսական լըվանի և Միացեալ նահանգաց (1847-1870/75) նամակաղորչմներն: Բայց անհամեմատ աւելի սուզ են այն ամէն նամակաղորչմներն, որոնց կը ներկայացնեն մասնաւոր զարաւորութիւն մը, կամ գոյներու, կամ տպագրութեամ, և կամ զիրքի (օր. տեղ-եթէշի, կամ երկու երեսն տպագրուած) սիւլաներու։

Գ. Հիմա հաւաքողներ շատ կան, որոնց իրենց շրջանակին մէջ ծանօթ են, որով անկարելի էնշանաւոր հաւաքիչներու սառուններն նշանութեամբ շարել. բայց ինչպէս որ շատ անգամ գործազրողին մեծութիւնն, երեւանելած գործին արժէն կը մեծնէ, սոյնպէս հաւաքիչներուն երեւելի անձ մը ըլլան ալ հաւաքածուն ալ երեւելի ըրած է, ինչպէս Բուսիոյ հանգուցեալ Զարին և կալիսի իշխանին հաւաքածուներն, որոնց ամենէն երեւելիներն և ամենէն շատ յիշուածներն են:

Ա. Ա. Ա. Ա.

Կ. Պողիս 3/17 Անգլ. 1898:

